ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2025 թվականի N 30-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 107-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ի մասի բ. կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարի կիրառման կարգը և չափերը հաստատելու մասին» թիվ 107-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025թվականի ապրիլի 1-ից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ
ԼԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՏՈՌՈՋՅԱՆ ԱՐՏԱԿ
ՏՈՌՈՋՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2025թ. մարտի 14
ք. Գորիս

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքի ավագանու
2025թ. մարտի 14-ի թիվ 30-Ա որոշման

«Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքի ավագանու
2018թ. դեկտեմբերի 26-ի թիվ 107-Ա որոշման

ԿԱՐԳ

Համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների Գորիսի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի կիրառման և դրանց չափերը

1. Սույն կարգով սահմանվում է համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների Գորիսի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների՝ առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և չափերը:
2. Աշխատանքային ստաժի համար հավելավճարը տրվում է այն համայնքային ծառայողներին, որոնց աշխատանքային ստաժում ընդգրկվում է այն աշխատանքը կամ ծառայությունը, որի համար անձը կրել է Գորիսի համայնքապետարանի աշխատակազմում շնորհված դասային աստիճաններ:
3. Երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացմամբ՝ 5-ից 10 տարի աշխատանքային ստաժի դեպքում 5%-ի չափով, 10-ից 15 տարի աշխատանքային ստաժի դեպքում 10%-ի չափով, 15-ից ավել տարիներին՝ 20%-ի չափով և կիրառվում է սահմանված աշխատանքային ստաժի լրանալու ամսվան հաջորդող ամսվա մեկից:
4. Համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով»: